

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՍՆԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ, ԾԱՑՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՑՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՑՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Ողջո՛ւյն հայրապետական Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հիսնամյա կյանքին ու գործունեության:

Երանելի օր մը արևոտ, առատաբաշխ Նեղոսի ափերուն, ասուվածասեր հայ մը՝ Պողոս Նուպար, իրեն նման բարեպաշտ ու բարեսիրտ իր ազգայիններու հետ համախոհուրդ, ծնունդ տվավ կազմակերպության մը՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, որ խորհրդանիշը և արտահայտիչը հանդիսացավ հայ ժողովրդի Քրիստոնեական գուրի սուրբ զգացումին և անոր իրավ առաքինություններուն: Այդ երանելի օրը Ս. Զատկի օր մըն էր՝ 15 ապրիլ 1906: Մեր Տիրոջ և Փրկչի հրաշափառ Հարության հավիտենական հիշատակը կարելի չէր ավելի պայծառորեն փառավորել քան այդ կատարվեցավ ափ մը հայազնյայց սրտի պարգևով:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության մեջ ներդաշնակորեն զուգակցվեցան՝ հայուն մտածումի ազնվությունը, զգացումի գեղեցկությունը և կամքի շինարար ձիրքերը: Ան տարվե տարի աճեցավ, ծավալեցավ ու զորացավ և ամբողջ մեր Ազգը ընդգրկեց, ազգով ազգին ծառայելու համար:

Եվ հիսուն տարիներ շարունակ այս օրհնյալ կազմակերպությունը՝ Նեղոսի ափերեն մինչև Վոլգայի ափերը, Ատլանտյանի ափերեն մինչև Արաբսի ափերը և մինչև Արևելքի մեր այսօրվա հայաշատ կեդրոնները, իր կենսատու ձեռքը երկարեց, ամենուն բաշխելով և՛ հաց, և՛ լույս, և՛ հույս, իբրև գերագույն նպատակ ունենալով պահպանությունը և կյանքի ապահովությունն ու բարօրությունը հայ ժողովրդի զանգվածներուն՝ Մայր Երկրեն ներս թե Մայր Երկրեն դուրս:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության անցնող հիսուն տարիներու գործն ու վաստակը բարոյական մեծ հաղթանակ մը կնանդիսանա, փառքի տիտղոս մը ևս ավելցնելով հայ ժողովրդի անունին, զի ան եղավ և կմնա ապահով հովանի մը, փրկարար ձեռք մը և հուսո ամրոց մը համայն հայ ժողովրդի համար:

Ողջունելով Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հոբելյանը, կօրհնենք սուրբ հիշատակը անոր երանելի հիմնադիրներուն, բոլոր ղեկավարներուն և բարեբարներուն, որոնք կնանգչին սրտով արդարներուն կողքին և իրենց հավատքով ու երկրային բարի գործերով արժանի դարձած են զԱստված տեսնելու:

Կմաղթենք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության երկար, անվախճան կյանք և բեղմնառատ գործունեություն, ամենաջերմ ցանկությամբ, որ իր ուշադրությունը դարձնե առավել եռանդով Սփյուռքի հայապահպանման և նոր սերունդներու հայեցի դաստիարակության կենսական գործին: Կեդրոնական վարչության Նախագահ Տիար Ալեքս Մանուկյանին և իրեն աշխատակից բարի գործի ընկերներուն, մասնաճյուղերու վարչությանց անդամներուն և պաշտոնյաներուն, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց կազմակերպություններուն, բոլոր ազգասեր բարեբարներուն և Միության անդամներուն՝ ի սրտե կմաղթենք քաջառողջ երկար կյանք, լի երջանիկ ու խաղաղ օրերով և առավելյալ ուժ և եռանդ՝ առատորեն պտղաբեր դարձնելու համար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության գործունեությունը հոգուտ Եկեղեցիին, Ազգին և վերընձյուղած Մայր Հայրենիքին:

Երանի՜ Քեզ բոլորիդ, որ «սուրբ էք սրտիւ» Աստուծո առջև և պարծանքը մեր Ազգին:

«Ողջ լերուք, զօրացեալ Ս. Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ: Ամէն»:

Կարեքին Բ.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20-ն մայիսի
1956 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԵ,
ի Ս. Էջմիածին: